չինեաց զորմն պարտիզի Հրեշտակապետաց ։ Երարձ նաեւ Արքունի հրամանաւ ջՔոճ կոչեցեալ տուբս , զոր պահանջէին այլազգիք 'ի միաբանից եւ յուխտաւորաց , ընդդէմ սովորութեան (1544) ։

Ի սաստկանալ անձրեւաց ձմերնային եղանակին՝ հեղեղք ջուրց յորդեալ լցան 'ի տաճարն Ս . Աստուածածնի , որ 'ի ձորն Գեթսէմանի , յորմէ խախտեալ աւերեցան սալահատակք և այլ չինուածք , ընդ որս և դերեզման Սուրբ կուսին ։ Իսկ Անդրիաս եպիսկոպոս եւս դատարկել անտի զջուրն և մաքրել զտեղին , և ապա հրամանաւ դատաւորին երեր զմարմարիոն քարինս յեկեղեցւոյն Բեթղեհէմի , և նոքօք չինեալ նորոգեաց զդերեզմանն (1549) ։

Լսեալ և Յոյնք զչարեալ լմն էին ընդ այս գործ Անդրիասայ , և խորհէին հասուցանել չարիս 'ի գլուխ նորին , և չգտեալ զայլ ինչ՝ զկնի ամաց սրդելին զմիաբանս եւ զուխտաւորս Հայոց 'ի դերեզմանէն Ս . Աստուածածնի , և ոչ թողուին պատարագել և կատարել զկոգեւոր պաշտամունս իւրեանց ։ Ետեսեալ Հայոց թէ՝ ոչ զիջանին նոքա 'ի խաստութենէ իւրեանց , բողոք բարձին առ Արքայ միաբանք եւ ուխտաւորք , բառնալ յինքեանց զնեղութիւնս յօտար ազգաց , և զդիրն զայն առաքեցին 'ի ձեռն պատգամաւորի 'ի Թադաւորեալ քաղաքն ։ Արքայն Սիւլէյման դրեաց հրովարտակ առ դատաւորն , զի ըստ դանկատանացն Հայոց վերահասու լինել իրացն , և բառնալ զհակառակութիւնս , և կատարել Հայոց զպաշտամունս իւրեանց ըստ առաջին սովորութեան , այնպէս արասջիք ասէ , մի վերստին բողոք բարձցեն Հայք 'ի Դուռն , ՋՂ• (1552) ։

Փոխանորդ Ֆրանչիսկեան կրօնաւորաց Պոնիֆակիոս , առ հրաման 'ի դատաւորէն նորոգել զդիրեթ տաճարի Ս . Յարութեան , և զայլ տեղիս ։ Իսկ նորա ձեռնարկեալ նախ եւս քակել զպատանատեղին Քրիստոսի , և գետեղեաց զմեծամեծ մարմարիոն քարինս , եւ բարձրացոյց զերիս մատնաչափս 'ի յատակէն , և եդ երկաթի վանդակս շուրջանակի , և այլայլեցոյց առաջին դիրք տեղւոյն ։ Իսկ դատաւոր քաղաքին եւ բազմութեամբ այլազգեաց 'ի քննութիւն , կոչեցին զգլխաւորս քրիստոնէից , Գերմանոս պատրիարք Յունաց՝ և Անդրիաս Հայոց , տեսուչն վրաց